

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 24
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

24.08. 2001թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Հ. Պետրոսյան, Յու. Պողոսյան, Վ. Դանիելյան (*խորհրդի անդամներ*), Ա. Հարությունյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Կ. Կույումջյան (*Պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ*)
Ա. Շաբոյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ*)

Օրակարգի նախագծում՝ վեց հարց.

1. ՀՀ 2001թ. մարդահամարի հաշվառումն օրանավակայաններում և սահմանային անցման կետերում անցկացնելու մասին Ցուցումները հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

2. ՀՀ 2001թ. մարդահամարի նյութերի ընդունման կարգի մասին Ցուցումները հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

3. Ձև 9-ի հավելված 1 “Վերահսկիչ շրջագայության /շրջայց/ ամփոփագիրը” և հավելված 2 “Վերահսկիչ փաստաթղթերի ստուգման և մարման ամփոփագիրը” հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

4. Հրահանգիչ-հսկիչի, Մարդահամարի տեղամասի վարիչի “ՀՀ 2001թ մարդահամարի անցկացման ընթացքի մասին հաղորդագրությունները” հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

5. “Մարդահամարի աշխատակցի վկայական”, “Քարտ գոյության միջոցների աղբյուրների ցանկի”, “Երկարակյացների /100 և ավելի տարիքի/ հաշվառման թերթ”, “Վիճակագրության մարզային գործակալություններին և դրանց տարածքային բաժիններին՝ մարդահամարի անցկացման ժամանակ երկարակյացների տարիքը ստուգելու կարգի մասին Ցուցումներ”, “Գրություն այն անձանց, ում դժվար է տանը գտնել”, “Հաշվարարի պայուսակի պիտակ” փաստաթղթերին հավանություն տալու մասին.
/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

6. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը: Պարոն Մնացականյանի կողմից առաջարկվեց նաև հրավիրել վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի մասնագետներին այն նկատառումով, որ նիստի օրակարգն ակադճուն է առավելապես նորմատիվ բնույթի փաստաթղթերի նախագծերով: Խորհրդի 24.08.01թ. նիստի օրակարգի նախագիծը հաստատվեց միաձայն:

Լսեցին՝

1. ՀՀ 2001թ. մարդահամարի հաշվառումն օդանավակայաններում և սահմանային անցման կետերում անցկացնելու մասին Ցուցումները հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

Նշվեց, որ «ՀՀ 2001թվականի մարդահամարի հաշվառումն օդանավակայաններում և սահմանային անցման կետերում անցկացնելու մասին» Ցուցումները 25.08.01թ խորհրդի նիստում քննարկվելուց հետո ուղարկվել է լրամշակման և այժմ պատրաստ տարբերակը ներկայացվում է ՀՀ ՎՊԽ հաստատմանը:

Դիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան - կատարել կոնցեպտուալ բնույթի փոփոխություններ. այն է. հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ-ում սահմանային կետերը հաշվառման առումով վեցն են, ուստի խնդրել “Զվարթնոց” օդանավակայանին և հինգ սահմանային կետերին որպես վարչական ռեգիստրեր սույն կարգին համապատասխան իրականացնել անհրաժեշտ հաշվառումը:

Որոշեցին՝

հաստատել “ՀՀ 2001թ. մարդահամարի հաշվառումն օդանավակայաններում և սահմանային անցման կետերում անցկացնելու մասին Ցուցումների” դիտողություններով և առաջարկություններով լրամշակված տարբերակը/կցվում է/:

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. ՀՀ 2001թ. մարդահամարի նյութերի ընդունման կարգի մասին Ցուցումները հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

Նշվեց, որ սույն փաստաթուղթը նկարագրում է մարդահամարի նյութերի /հաշվառման փաստաթղթերի/ հանձնման-ընդունման կարգը: Սույն կարգով սահմանված դրույթները տարածվում են մարդահամարային տեղամասերի և ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների վրա:

Առաջարկություններ և դիտողություններ.

Վ. Դանիելյան -փաստաթղթի անվանման մեջ ավելացնել “հանձնման” բառը,

Ս. Մնացականյան - փաստաթղթի անվանման մեջ նյութեր բառից հետո՝ փակագծերում ավելացնել “հաշվառման փաստաթղթեր” բառերը

Որոշեցին՝

հաստատել “ՀՀ 2001թ. մարդահամարի նյութերի/հաշվառման փաստաթղթերի ընդունման-հանձնման կարգի մասին Ցուցումների” դիտողություններով և առաջարկություններով խմբագրված տարբերակը:

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Ձև 9-ի հավելված 1 “Վերահսկիչ շրջագայության /շրջայց/ ամփոփագիրը” և հավելված 2 “Վերահսկիչ փաստաթղթերի ստուգման և մարման ամփոփագիրը” հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

Նշվեց, որ Խորհրդի նախորդ նիստում հաստատվել է ձև-9-ը փաստաթուղթը, որի հավելվածները նույնպես ներկայացվում են Խորհրդի հաստատմանը:

Որոշեցին՝

հաստատել ձև 9-ի հավելված 1 “Վերահսկիչ շրջագայության /շրջայց/ ամփոփագիրը” և հավելված 2 “Վերահսկիչ փաստաթղթերի ստուգման և մարման ամփոփագիրը” /ձև 10/ (կցվում են):

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Հրահանգիչ-հսկիչի, Մարդահամարի տեղամասի վարիչի “ՀՀ 2001թ մարդահամարի անցկացման ընթացքի մասին հաղորդագրությունները” հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան

Նշվեց, որ Խորհրդի նիստին ներկայացված փաստաթղթերը համապատասխան քննարկումներից հետո ներկայացվում են Խորհրդի հաստատմանը:

Որոշեցին՝

հաստատել Հրահանգիչ-հսկիչի, Մարդահամարի տեղամասի վարիչի “ՀՀ 2001թ մարդահամարի անցկացման ընթացքի մասին հաղորդագրությունները”/կցվում են/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝6 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. “Մարդահամարի աշխատակցի վկայական”, “Քարտ գոյության միջոցների աղբյուրների ցանկի”, “Երկարակյացների /100 և ավելի տարիքի/ հաշվառման թերթ”, “Վիճակագրության մարզային գործակալություններին և դրանց տարածքային բաժիններին՝ մարդահամարի անցկացման ժամանակ երկարակյացների տարիքը ստուգելու կարգի մասին Ցուցումներ”, “Գրություն այն անձանց, ում դժվար է տանը գտնել”, “Հաշվարարի պայուսակի պիտակ” փաստաթղթերին հավանություն տալու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

Նշվեց, որ ներկայացված փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ ՎՊԽ քննարկմանը՝ հավանության արժանանալու նկատառումով:

“Մարդահամարի աշխատակցի վկայական”,

Ս. Մնացականյան – Մարդահամարի աշխատակցի վկայականում ավելացնել անձնագրի սերիան և համարը,

-քաղաքապետի, գյուղապետի ստորագրության տեղը հանել,

-ավելացնել ըստ մարզերի առանձին համարակալում

Որոշեցին՝

հավանություն տալ “Մարդահամարի աշխատակցի վկայականի” նմուշային տարբերակներին /ըստ մարզերի/ (կցվում է):

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Քարտ գոյության միջոցների աղբյուրների ցանկի.

Որոշեցին՝

Գոյության միջոցների աղբյուրների ցանկի քարտն ընդունելի գիտություն:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

“Երկարակյացների /100 և ավելի տարիքի/ հաշվառման թերթ” և “Վիճակագրության մարզային գործակալություններին և դրանց տարածքային բաժիններին՝ մարդահամարի անցկացման ժամանակ երկարակյացների տարիքը ստուգելու կարգի մասին Ցուցումներ”

Նշվեց, որ “Երկարակյացների /100 և ավելի տարիքի/ հաշվառման թերթը” և “Վիճակագրության մարզային գործակալություններին և դրանց տարածքային բաժիններին՝ մարդահամարի անցկացման ժամանակ երկարակյացների տարիքը ստուգելու կարգի մասին Ցուցումները” նպատակ ունեն հավաքագրել հանրապետությունում 100 և ավելի տարիք ունեցող անձանց մասին տեղեկատվություն:

Որոշեցին՝

մերժել “Երկարակյացների /100 և ավելի տարիքի/ հաշվառման թերթը” և “Վիճակագրության մարզային գործակալություններին և դրանց տարածքային բաժիններին՝ մարդահամարի անցկացման ժամանակ երկարակյացների տարիքը ստուգելու կարգի մասին Ցուցումները”, քանի որ վերջիններս չեն համապատասխանում “Մարդահամարի մասին” ՀՀ օրենքի պահանջներին:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Գրություն այն անձանց, ում դժվար է տանը գտնել.

Նշվեց, որ ներկայացված փաստաթուղթը մշակվել է այն նպատակով, որպեսզի հաշվառումից դուրս չմնան այն անձինք, որոնց չի հաջողվել գտնել տանը:

Որոշեցին՝

հավանություն տալ “Գրություն այն անձանց, ում դժվար է տանը գտնել” փաստաթղթին:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Հաշվարարի պայուսակի պիտակ.

Որոշեցին՝

հավանություն տալ “Հաշվարարի պայուսակի պիտակ” փաստաթղթին:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. Այլ հարցեր

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Հարությունյան